ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2019 թ. N 682-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 49-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 137-Ն որոշման 2-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Եթե սույն որոշումը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնց հետևանքով պետք է դադարեցվի մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը փոխհատուցում ստացած հարկ վճարողներին փոխհատուցումների տրամադրումը, ապա մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կիրառվում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող դրույթները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի մարտի 23-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***